**ՀԱՅԱՍՏԱՆԻ**
**ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՂԵԿԱՎԱ**
**Ր**


Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ Լոռու մարզ , ք. Թումանյան, Կենտրոնական փ., շ.1, Հեռ.
(+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am


N 497
*02 սեպտեմբեր 2019թ.*

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ**
**ՄԱՐԶՊԵՏ**
**ՊԱՐՈՆ ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ**

Հարգարժա՛ն պարոն Ղուկասյան

Թումանյան համայնքի ղեկավարի թիվ 85-Ա - 87 -Ա որոշումները, թիվ 61-75 կարգադրությունները և աշխատակազմի քարտուղարի թիվ 61-65 հրամանները:

Առդիր՝ 3 ֆայլ:

Հարգանքով

**ՀԱՄԱՅՆՔԻՂԵԿԱՎԱՐ՝** **ԼԵՎՈՆ ՋԱՎԱՐՅԱՆ**

*Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Ռ. Շահվերդյան*
*098 048 046*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ՕԳՈՍՏՈՍԻ 2019թվականի N 85-Ա

## ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՔԱՂԱՔԻ 4-ՐԴ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 2/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի դրույթներով,Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի գ) ենթակետով,ՀՀ<<Հողային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին>> 04.10.2005թ.ընդունված ՀՕ -199-Ն, ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 8-րդ կետի պահանջներով,10.06.2008թ <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական  բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՕ -117-Ն օրենքով, ինչպես նաև հաշվի առնելով, որ բնակելի տունը և դրա կառուցման և սպասարկման համար փաստացի առկա հողատարածքը չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման  գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին,չի առաջացնում սերվիտուտ,իսկ առկա շինությունները կառուցվել են մինչև 2001թվականի մայիսի 15-ը,հիմք ընդունելով 23.08.2019թ.ժառանգության իրավունքի վկայագիրը՝ սեղանամատյան N 2338 և 2339,<<ԱԿԱ-ԳՐԱՆԻՏ>> ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի և շինության հատակագծերը և լիազորված անձ Անահիտ Ավագյանի դիմումը՝ որոշում եմ.

1.Վերականգնել և ճանաչել քաղաքացիներ՝Տատյանա Պետրովնա Թորոսյանի, Վլադիմիր և Մարյամ Ամրաստանի Թորոսյանների,Գայանե Համլետի Քոչարյանի և Արթուր Սամվելի Թորոսյանի բաժնային սեփականության իրավունքը  Լոռու մարզ,Թումանյան քաղաք,4-րդ փողոց թիվ 2/3  հասցեում գտնվող 06-004-0006-0015 ծածկագրի 0,10835 հա հողամասի և հողամասում 1985 թվականին կառուցված 114,0 քմ մակերեսով բնակելի տան,1985թ.կառուցված 34,0քմ մակերեսով բաց պատշգամբների և 1985թ. կառուցված 11,3քմ մակերեսով մառանի  նկատմամբ:
2.Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
3.Բնակելի տանը տրամադրել  նոր <<ՀՀ Լոռու մարզ, Թումանյան համայնք, ք.Թումանյան, 4-րդ փողոց,շ. 2, բն.3>> հասցեն:
4.Սույն որոշումն ենթակա է պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ՕԳՈՍՏՈՍԻ 2019թվականի N 86-Ա

## ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի գ) ենթակետով ,հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 1452515 վկայականը, տրվ.20.08.2003թ և Թումանյան համայնքի Քարինջ գյուղի բնակչուհի Զոյա Հակոբի Պետրոսյանի դիմումը՝ որոշում եմ.

1. Թումանյան համայնքի Քարինջ գյուղի բնակչուհի Զոյա Հակոբի Պետրոսյանին սեփականության իրավունքով պատկանող Լոռու մարզ,գ.Քարինջ բնակելի տանը (ծածկագիր՝ 06-110-017-000004-001) մակերեսի չափը՝59,0քմ ,0,076 հա մակերեսով տնամերձ հողամասին և 42,6քմ մակերեսով գոմին տրամադրել նոր <<ՀՀ Լոռու մարզ, Թումանյան համայնք, գ.Քարինջ,Մերուժան Եղինյանի փողոց, 2-րդ նրբանցք,տուն 3>> հասցեն:
2.Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ՕԳՈՍՏՈՍԻ 2019թվականի N 87-Ա

## ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի գ) ենթակետով ,հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 1563898 վկայականը, տրվ.20.08.2003թ և Թումանյան համայնքի Քարինջ գյուղի բնակչուհի Զոյա Հակոբի Պետրոսյանի դիմումը՝ որոշում եմ.

1. Թումանյան համայնքի Քարինջ գյուղի բնակչուհի Զոյա Հակոբի Պետրոսյանին սեփականության իրավունքով պատկանող Լոռու մարզ,գ.Քարինջ տնամերձ հողամասին (ծածկագիր՝ 06-110-015-000008) մակերեսի չափը՝0,026 հա տրամադրել նոր <<ՀՀ Լոռու մարզ, Թումանյան համայնք, գ.Քարինջ,4-րդ փողոց,տնամերձ 6/2>> հասցեն:

2.Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ